ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

2010-2012թթ. ՉԺՀ կառավարության անհատույց օգնության տեխնիկատնտեսական ծրագրերի շրջանակներում ՉԺՀ-ից ՀՀ են ներկրվել 88 շտապ օգնության մեքենաներ: ՀՀ Առողջապահության նախարարությունը հետագայում դիմել է չինական կողմին՝ խնդրելով տրամադրել ևս 200 շտապ օգնության մեքենաներ և ռեանիմոբիլներ:

2017թ. հունվարին ՉԺՀ կառավարությունը հավանություն է տվել Հայաստանին ևս 200 շտապ օգնության մեքենա և ռեանիմոբիլ նվիրաբերելու ծրագրին:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության, նշյալ 200 ավտոմեքենան ստանալով՝ հայկական կողմը կկարողանա ամբողջությամբ բավարարել հանրապետությունում շտապ օգնության ավտոմեքենաների կարիքը: Նախկինում ՉԺՀ կողմից տրամադրված 88 ավտոմեքենաների մեծ մասը (56 հատ) բաշխվել են ՀՀ մարզերի միջև և միայն 32-ն են տեղակայվել Երևանում: Այս անգամ նախատեսվում է ավտոմեքենաները բաշխել նույն կերպ՝ ստացվող օգնության մեծ մասը տրամադրելով ՀՀ մարզերին:

Հաշվի առնելով հարցի բացառիկ կարևորությունը՝ ՀՀ ԱԳՆ նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև տեխնիկատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրի ստորագրումը:

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՇԱՎԱՐՇ ՔՈՉԱՐՅԱՆ